

ՀԱՅ ԳԻՏԱ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Տերմինաբանության մշակման և կարգավորման հարցերը վաղուց ի վեր գրավել են թե՛ առանձին գիտնականների և թե՛ գիտական կազմակերպությունների ուշադրությունը: Հայտնի է, որ անցյալում եղել են գիտության ու տեխնիկայի այս կամ այն բնագավառում ճշգրիտ տերմինաբանություն սահմանելու բազմաթիվ փորձեր: Ուշագրավ են քիմիական միացությունների անվանակարգ սահմանելու՝ Լավուազիեի և Բերտոլեի փորձերը: Հիշատակելի են նաև բուսաբանության ու կենդանաբանության բնագավառներում անվանակարգ և տերմինաբանություն սահմանելու Լիննեյի փորձը, ինչպես և կազմախոսության բնագավառում՝ Վեգալիայի, մաթեմատիկայի բնագավառում՝ Դյուրելի փորձերը:

Հայկական տերմինաբանության հաստատուն հիմքեր դրվել են դեռևս V—VI դարերում: Ստեղծված ավանդույթները առաջնորդ են հանդիսացել հետագա դարերում ևս ազգային տերմինաբանության մշակման ու հարստացման գործում: Նախասովետական շրջանում մեծք արդեն ունեինք բազմաթիվ գիտությունների գծով մշակված գիտա-տեխնիկական տերմինաբանություն, որը արտացոլվել է հայերեն երկլեզվյան ու բազմալեզվյան թե՛ ընդհանուր և թե՛ հատուկ մասնագիտական բառարաններում (բժշկական, բուսաբանական, «գործնական գիտությունների», աշխարհագրական, կազմախոսության և այլն), ինչպես նաև դասագրքերում, գիտական կամ հանրամատչելի հարուստ գրականության մեջ:

Սակայն տերմինաբանության մշակման ու կարգավորման աշխատանքները, որպես պետական կարևոր և անհրաժեշտ

միջոցառում, ձեռնարկվեցին Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո: 1933 թ. պրոֆեսոր Գ. Գ. Սևակի նախաձեռնությամբ ՀՍՍՀ Կենտրոնական կից կազմակերպվեց գիտական տերմինաբանական կոմիտե: Իր գործունեության սկզբնական շրջանում կոմիտեն հրապարակեց մի շարք կարևոր որոշումներ հայոց լեզվի նորմավորման և հատկապես տերմինաշինության ընդհանուր սկզբունքների մասին: Հետագայում կոմիտեն քննարկեց ու հաստատեց արդյունաբերական, սննդի և կենցաղում հաճախ օգտագործվող ապրանքների, աշխարհագրական, իրավաբանական, ռազմական ևն հասկացությունների մի շարք տերմիններ և անվանապարզեր: Սակայն կոմիտեն հնարավորություն չի ստացել ընդարձակելու իր աշխատանքները, մշակելու ու հրապարակելու գիտության ու տեխնիկայի որևէ ճյուղի գեթ մի տերմինարան կամ տերմինաբանական բառարան:

Գիտա-տեխնիկական տերմինաբանության խնդիրները և նրանց հետ կապված տերմինների կառուցման տեսական հիմունքների ու մեթոդիկայի մշակման հարցերը ներկայումս ստացել են կարևոր նշանակություն, մասնավորապես գիտության ու տեխնիկայի աննախընթաց զարգացման շնորհիվ առաջացել են նոր ճյուղեր, ինչպիսիք են՝ կիբեռնետիկան, ավտոմատիկան, քվանտային էլեկտրոնիկան, հեռուստամեխանիկան, հաշվողական տեխնիկան, բիոնիկան և այլն, որոնք պահանջում են համապատասխան տերմիններ:

Ելնելով վերոհիշյալից, ինչպես նաև թե՛ ՍՍՀՄ-ում և թե՛ արտասահմանում հանրաճանաչ այն իրողությունից, որ տերմին-

ճարարության մշակումը և կարգավորումն իրենց գիտնականների կենսական գործն է. և, որ տերմինաբանությունը, որպես գիտություն, մտնում է ակադեմիական հիմնարկների գործունեության ոլորտը, ինչպես առնելով նաև ՍՍՀՄ Միևհատրենի սովետի 1965 թ. № 18 և 1970 թ. № 900 որոշումները այն մասին, որ գիտատեխնիկական տերմինաբանության մշակումը, կարգավորումն ու ստանդարտացումը դասվում են գիտա-հետազոտական աշխատանքների կարևորագույն պրոբլեմների շարքը, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահությունը 8—10—1969 թ. որոշմամբ ստեղծեց ՀՍՍՀ ԳԱ գիտա-տեխնիկական տերմինաբանության խորհուրդ: Նույն որոշումով հաստատվեց խորհրդի կազմը՝ բաղկացած 29 հոգուց, այդ թվում խորհրդի նախագահ՝ ԳԱ թղթակից-անդամ Գ. Գ. Սևակ, տեղակալ՝ քիմիական գիտությունների թեկնածու Վ. Տ. Ալախյան, գիտքարտուղար՝ ինժեներ Գ. Հ. Լիվանցով: Խորհրդի կազմի մեջ ներկայացված են՝ 6 ակադեմիկոսներ, 4 թղթակից անդամներ, 8 դոկտոր պրոֆեսորներ, գիտությունների 11 թեկնածուներ և ստատիստիկական բարձր որակի մասնագետներ:

Խորհուրդը, դեռևս չունենալով ոչ մի հաստիքային միավոր՝ անցած մի քանի ամիսների ընթացքում կատարել է զգալի աշխատանք, այն է՝

1. Մշակել և հրատարակման է պատրաստել տերմինաբանների նախագծերի հետևյալ պրակները՝

ա) Զրամեխանիկա (հիդրոմեխանիկա) — 5 լեզվով,

բ) մամուլում և գիտական գրականության մեջ հաճախակի սխալ օգտագործվող 120 տերմիններ,

գ) կատալիզ (ընթացավոր) և կատալիզատորներ (5 լեզվով):

2. Սկսված է գիտա-տեխնիկական տերմինաբանության քարտարանի կազմումը (քարտավորված է 10000 տերմին):

3. Հաստատել է՝ գործնական կապեր և

փորձի փոխանակում Մոսկվայի, Թբիլիսիի և այլ քաղաքների տերմինաբանական մարմինների հետ:

4. Հաստատել է՝ համագործակցման կապեր նաև ՀՍՍՀ Պետպլանի ստանդարտների բաժնի, ստանդարտացման համաժողովական գիտահետազոտական ինստիտուտի Երևանի բաժանմունքի, ՍՍՀՄ ստանդարտների կոմիտեի Հայաստանի լիազորության, Հայաստանի գիտա-տեխնիկական ինֆորմացիայի ինստիտուտի և Երևանում գործող այլ համապատասխան կազմակերպությունների հետ:

5. Հրավիրել է հայերեն գիտական և տեխնիկական տերմինաբանության հարցերին նվիրված հանրապետական կոնֆերանս, որին մասնակցել են վերոհիշյալ շահագրգռված կազմակերպությունների, ԳԱ բաժանմունքների, միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատությունների, գիտա-հետազոտական և նախագծային ինստիտուտների, արդյունաբերական և այլ ձեռնարկների տերմինաբանության հարցերով զբաղվող ներկայացուցիչներ:

6. Տպագրության է պատրաստվում խորհրդի «Պաշտոնագիր» եռամսյա օրգանի միացյալ 1 և 2 համարները (յուրաքանչյուր համարը — 5 տպ. մամուլի ծավալով՝ տեսական, մեթոդական, կոնսուլտատիվ և ինֆորմացիոն բաժիններով):

Կոնֆերանսն եղավ արդյունավետ և պարզեց մի շարք կարևոր ու սկզբունքային հարցեր. հայտնաբերեց տեսակետների միասնականություն, ճշտորոշեց խորհրդի դերն ու նշանակությունը հայերենի տերմինաբանության բնագավառում և սահմանեց նրա գործունեության ոլորտը, որվագծելով խորհրդի հետագա անելիքները: Հիշատակման արժանի է կոնֆերանսի միահամուռ առաջարկը՝ խորհուրդը համարել գիտատեխնիկական տերմինաբանության մշակման ու կարգավորման գլխամասային մարմին Հայաստանում: Կոնֆերանսն արձանագրեց, որ մեր հանրապետությունում, չնայած տարբեր

տեսակետների բախումներին, գիտատեխնիկական տերմինաբանության մշակումն ու կարգավորումն առաջ է ընթանում հիմնականում առողջ ուղիներով՝ մեր ազգային լեզվի ոգուն համապատասխան:

Անօգտակար համարելով անցյալում մամուլի էջերում տեղ գտած բանավեճերը տերմինների հարցում՝ մաքրամոլության և օտարամոլության պաշտպանների միջև, կոնֆերանսը անհրաժեշտ գտավ վերջ տալ անտարկայական և վերացական այդ վեճերին և տերմինաբանության հարցերը լուծել՝ առաջնորդվելով լեզվի մաքրության լեզվաբան սկզբունքներով, ՀՍՍՀ պետական տերմինաբանական կոմիտեի 1933 թ. հաստատած և 1939 թ. վերանայած որոշումներով և ГОСТ (ГОУС) 1. 5—68-ի 1. 4. 14 կետի պահանջներով, որոնցով մերժվում է օտարազգի բառեր և տերմիններ գործածել ազգային համարժեք բառի կամ տերմինի առկայության դեպքում, չբացատրելով օտարազգի տերմին ընդունելը, եթե գոյություն չունի ազգային տերմին կամ անհնար է նրա ստեղծումը:

Հայերեն գիտատեխնիկական տերմինաբանության մշակման, կարգավորման ու ստանդարտացման աշխատանքները ընդարձակելու և խելացի հիմունքներով կազմակերպելու վերաբերյալ կոնֆերանսի որոշումները կենսագործելու նպատակով, խորհուրդը հանրապետության մասշտաբով կազմել է տերմինաբանության զբաղվող կազմակերպությունների ու մարմինների համաձայնեցված հնգամյա պլան, հաշվի առնելով՝ պետական, գիտական, արդյունաբերական ձեռնարկությունների իրական պահանջմունքները, առավել զարգացող գիտությունների թելադրանքը: Այդ պլանը նախատեսել է մշակել ճյուղային և միջճյուղային տերմինաբաններ, արդյունաբերության ու տեխնիկայի տարբեր ճյուղերի տերմինաբանական ստանդարտներ, մասնագիտական երկլեզվյան ու բազմալեզվյան բառարաններ, տերմինաբանության վերաբերյալ տեսական, մեթոդական և գործնական ձեռ-

նարկներ, արդյունաբերական, մթերային և այլ ապրանքների անվանակարգերի ուսուցանելու *բառացանկեր* և այլն:

Խորհրդի աշխատանքների պլանում նախատեսված է նաև ձեռնարկել միջոցառումներ մասնագետ-տերմինաբանների կադրեր պատրաստելու համար՝

1. ԳԱ ասպիրանտուրայի գծով—տարեկան ընդունել 2—3 ասպիրանտ գիտության ու տեխնիկայի տարբեր մասնագիտություններով:

2. Կազմակերպել տերմինաբանական սեմինար-ստուդիա այն մասնագետների համար, որոնք զբաղվում կամ հետաքրքրվում են տերմինաբանության հարցերով:

3. Երեսուն ժամվա սահմաններում մտցնել գիտատեխնիկական թեմա մասնագետ երիտասարդ ասպիրանտների շնորհալի մասի անհատական պլաններում:

Խորհուրդը նախագծել է կազմակերպել առևտրի ցանցում մասսայական կիրառություն ունեցող անվանակարգերի անվանումների մշակման և միօրինակացման աշխատանքներ տնտիսաշխարհային հիմունքներով:

Սակայն նորաստեղծ հայ տերմինաբանության ասպառ դարբնոցի հետագա գործունեության արդյունավետությունը լիովին կախված է երկու կարևոր գործոններից, այն է՝ խորհրդի աշխատանքների նյութա-տեխնիկական ապահովությունից և մեր հասարակայնության օժանդակությունից: Ժամանակն է համակվելու գիտակցությամբ, որ գիտատեխնիկական տերմինաբանության մշակման ու կարգավորման աշխատանքները մեր ազգային մշակույթի, գիտության ու տեխնիկայի նոր վերելքի նախապայման են, և այդ աշխատանքներին մասնակցելը պետք է համարել ազգանվեր և պատվո գործ:

Գ. Հ. ՍՐՎԱՆՉՏՅԱՆ

ԳԱ գիտատեխնիկական տերմինաբանության խորհրդի գիտաբաժնի ղեկավար